մանն. զի 'ի նմին ժամանակի նոքա եւս ամբաստան լեալ էին՝ թէ ագարակն սահմանափակ 'ի չորից կողմանց՝ է 'ի կալուածոց Շէյխ Ահմէտ Տէճէննեայ: Սակայն փոխանորդք երից ազգաց հաստատեցին յայնժամ՝ թէ անդիքն այնոքիկ գերեզմանատուն է քրիստոնէից՝ յաւուրց անտի Մէլիք Սալահատտինի և Սէլիմայ Արքայի, զորս թողին 'ի ձեռս քրիստոնէից լինել սեփհական գերեզմանատեղի, և Արքայն Սէլիմ շնորհեաց զպատճէն Կայսերական տումարին, եւ մինչեւ ցայսօր թաղեն նոքա անդ զմեռեալս, եւ տիրեն առաջի որդւոց և ժառանգաց Շէյխ Ահմէտ Տէճէննեայ առանց խռովութեան: Ապա մատուցին զպատճէն Կայսերական տումարին և զայլ գրեանս, և ասեն. Առաջին դատաւորք ոչ գտին 'ի ձեռս նախնեաց ձերոց մուրհակս ինչ, զի ամբաստանութիւնք ձեր յառաջանային յանելութենէ և 'ի հակառակութենէ, որոյ վասն արգիլեալ 'ի բաց մերժէին զնոսա յատենէ՝ եւ տային 'ի ձեռս քրիստոնէից գիր 'ի դատարանէ, նմին իրի ոչ եղեւ խռովութիւն ինչ մինչեւ ցայսօր, իսկ դուք ամբաստանողքդ ոչ կարէք մատուցանել մուրհակ և գիր օրինաւոր:

Եւ 'ի խնդրել դատաւորին վկայս 'ի քրիստոնէից, մատուցին նոքա զորս չորս 'ի նոյն իսկ յայլազգեաց Սիոնի, որք և ասէին թէ՝ անդիքն այնոքիկ գերեզմանատունք են քրիստոնէից: Ապա արգել զհակառակորդսն, խելամուտ արար զնոսա 'ի վաւերական գրոց, և թէ վճռն ընդդէմ է նախնեաց իւրեանց: Եւ նոքա ծանեան զիրաւունս քրիստոնէից, և 'ի բաց կացին 'ի դատաստանէ իւրեանց, եւ խոստովան եղեն յատենի անդ. թէ որդիք Տէճէննեայ չունին այսուհետեւ իրաւունս 'ի վերայ գերեզմանատանց քրիստոնէից, եւ դատաւորն 'ի գրի եհար զայս դատաստան և ետ ցփոխանորդն Հայոց, ՌՃԿԴ (1751):

Իսկ Յակոբ եպիսկոպոս 'ի գալստեան Եաղուպ աղայի արարեալ էր նմա եւ ընտանեաց նորին ընդունելութիւն մեծ, ընկալեալ զնոսա մեծաւ փառօք ըստ արժանաւորութեան նոցին: Եւ 'ի միջոցի ատա սիրելի եցոյց զինքն Յակոբ Եաղուպայ եւ բազում ինչ խօսեցաւ ընդ նմա. և աղաչեաց զնա դարձուցանել զինքն 'ի Պատրիարքութիւն Կոստանդինուպօլսոյ. զի կարի տաղտկացեալ էր յերեսաց